



ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացրած վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2009թ. գործունեության տարեկան ծրագրի 4.15 կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 26/3 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին (այսուհետ՝ ՀՀ ՔԾ խորհուրդ) պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ ՔԾ խորհրդին պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման և բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաև պետական սեփականության կառավարմանն ու օգտագործմանն ուղղված գործարքներն ու ընթացակարգը:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ ՔԾ խորհրդի աշխատակազմ:

Վերահսկողության ծավալը՝ Վերահսկողության ընթացքում ստուգվել են հետևյալ ծրագրերը.

- Պետական կառավարման մարմնի պահպանման ծախսեր՝
-2007թ. - 172,544.7 հազ. դրամ,
-2008թ. – 178,340.7 հազ. դրամ:
- Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվողների վարձատրության ծախսեր՝
- 2007թ. - 14,811.2 հազ. դրամ,

- 2008թ. – 94,975.4 հազ. դրամ (52,971.7 հազ.դրամը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից):

• ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվեր՝

- 2007թ. - 18,519.7 հազ.դրամ,

- 2008թ. – 16,593.1 հազ.դրամ:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2009թ. նոյեմբերի 16-ից մինչև 2009թ. դեկտեմբերի 30-ը:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակաշրջանը՝ 2007թ. հունվարի 1-ից մինչև 2008թ. դեկտեմբերի 30-ը:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են ստուգման և վերլուծության ձևը, ինչպես նաև՝ համապատասխանության և ֆինանսական վերահսկողության տեսակները:

Ապացույցների ստացման մեթոդներից կիրառվել են փաստաթղթերի ու ակտիվների ստուգման, ընթացակարգի և գործընթացի ուսումնասիրության, հարցման և հաշվարկման մեթոդները: Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների և համապատասխան տեղեկատվության տարրերի միջև փոխկապակցվածության և /կամ/ համեմատության վերլուծություն:

Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների /քանակական և որակական/ համադրման մեթոդներ, կատարվել է նախապես պատրաստված հարցաշարով տարբեր փաստաթղթերի և տվյալների մանրամասն ուսումնասիրություն: Ստուգումներն իրականացվել են նաև գույքագրման եղանակով:

Վերլուծության փուլում ամփոփվել, ինչպես նաև վեր են լուծվել վերահսկողության դիտարկման և ստուգման փուլում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքները

ՀՀ ԶԾ խորհրդին 2007-2008 թվականներին բնականոն գործունեության ապահովման համար պետական բյուջեից նախատեսվել է հատկացնել համապատասխանաբար՝ 429,339.80 հազ. դրամ և 459,071.7 հազ.դրամ, որի դիմաց փաստացի ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է համապատասխանաբար՝ 396,137.5 հազ. դրամ և 446,702.6 հազ. դրամ (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1
հազ. դրամ

h/h		2007 թվական			2008 թվական		
		նախահա շիվ	ֆինանսա վորում	փաստ. ծախս	նախահա շիվ	ֆինանսա վորում	փաստ. ծախս
1	ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ որի մեջ՝	172,576.50	172,544.07	172,544.07	178,711.30	178,658.08	178,658.08
1.1	Աշխատավարձ	117,642.50	117,637.35	117,637.35	125,899.00	125,866.76	125,866.76
1.2	Պարգևատրման ֆոնդ	7,166.40	7,166.40	7,166.40	7,178.20	7,178.20	7,178.20
1.3	Սոցիալական վճարներ	17,461.00	17,460.96	17,460.96	18,277.90	18,277.90	18,277.90
2	ՔԾ ԿԱԴՐԵՐԻ ԿԱՐՃԱԺԱՍԿԵՏ ՈՒԵՉԵՐՎ որի մեջ՝	42,000.00	14,811.17	14,811.17	42,000.00	42,000.00	42,000.00
2.1	Աշխատավարձ	33,600.00	12,213.78	12,213.78	33,600.00	33,600.00	33,600.00
2.2	Սոցիալական վճարներ	8,400.00	2,597.40	2,597.40	8,400.00	8,400.00	8,400.00
3	ՔԾ ԾԱՌԱՅՈՂՆԵՐ Ի ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏ ՈՒՄ	21,550.00	19,303.79	19,303.79	21,550.00	16,593.06	16,593.06
4	ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԳԵՄԻԱ	193,213.30	189,478.44	189,478.44	163,553.2	154,940.4	154,940.4
5	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ որի մեջ՝	-	-	-	53,257.40	52,971.73	52,971.73
5.1	Աշխատավարձ	-	-	-	46,113.40	45,827.73	45,827.73
5.2	Սոցիալական վճարներ	-	-	-	7,144.00	7,144.00	7,144.00
	ԸՆԴԱՄԵՆԸ	429,339.80	396,137.47	396,137.47	459,071.7	446,702.6	446,702.6

ՀՀ ՔԾ խորհրդին 2007-2008 թվականներին ապարատի պահպանման համար նախատեսվել է հատկացնել համապատասխանաբար՝ 172,576.5 և 178,711.3 հազ. դրամ, որի դիմաց ֆինանսավորումը և փաստացի ծախսը կազմել է համապատասխանաբար՝ 172,544.7 հազ. դրամ և 178,340.7 հազ. դրամ: 2008 թվականին, 2007 թվականի համեմատ ծախսի աճը հիմնականում պայմանավորված է խորհրդի աշխատակազմի աշխատակիցների աշխատավարձերի ավելացմամբ:

ՀՀ ՔԾ խորհրդի աշխատակազմի աշխատակիցներին 2007 և 2008 թվականներին աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարումների համար պետական բյուջեով նախատեսված համապատասխանաբար՝ 124,808.9 և 133,077.2 հազ. դրամի դիմաց փաստացի հատկացվել է 124,803.7 և 133,044.9 հազ. դրամ, իսկ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները կազմել են՝ 17,460.9 հազ. դրամ և 18,227.9 հազ. դրամ:

Հարկ է նշել, որ ՀՀ ՔԾ խորհրդի աշխատակազմի աշխատակիցների վարձատրության և պարգևավճարների չափերը հաստատում է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը:

2007 և 2008 թվականներին ՀՀ ՔԾ խորհրդի աշխատակազմի «Պետական կառավարման մարմնի պահպանման ծախսեր» ծրագրով առաջացել է համապատասխանաբար՝ 203.9 հազ. դրամի և 208.1 հազ. դրամի դեբիտորական պարտք՝ էլեկտրաէներգիայի, կապի ծառայությունների և ջրնուղ կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսերի գծով: Դեբիտորական պարտքի առաջացումը երկու տարիներին էլ պայմանավորված է այն բանով, որ այդ ծախսերի գծով հաշիվ-ապրանքագրերը ներկայացվում է հաջորդ տարվա հունվար ամսվա մեջ:

2007 և 2008 թվականներին պետական բյուջեով «Քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գտնվողների վարձատրության ծախսեր» ծրագրով տարեկան ծախսերի նախահաշվով հատկացվել է համապատասխանաբար՝ 42,000.0 հազ. դրամ և 42,000.0 հազ. դրամ, որի դիմաց փաստացի ֆինանսավորումը կազմել է՝ 14,811.7 հազ. դրամ և 42,000.0 հազ. դրամ: Հարկ է նշել, որ 2008թ. ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգում տեղի ունեցած փոփոխությունների, մասնավորապես՝ մի շարք պետական մարմիններում վերակազմակերպման և կառուցվածքային փոփոխությունների հետևանքով զգալիորեն ավելացել են քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողների թիվը: ՀՀ համապատասխան գերատեսչություններում Օրենքով սահմանված կարգով, հիմնականում հաստիքների կրճատման պատճառով քաղաքացիական ծառայության կադրերի կարճաժամկետ ռեզերվում 2008թ. գրանցվել է 266 քաղաքացիական ծառայող՝ 2007 թվականի 93 քաղաքացիական ծառայողի դիմաց:

Կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողների աշխատավարձի վճարումը ժամանակին ապահովելու համար ՀՀ ՔԾ խորհրդին ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 53,257.4 հազ. դրամ գումար, դրամարկղային ծախսը կազմել է 52,971.7 հազ. դրամ, իսկ չօգտագործված 285.7 հազ. դրամը վերադարձվել է պետական բյուջե՝ որպես չօգտագործված ֆինանսավորման

մնացորդի վերադարձ: Այսպիսով, 2008թ. կադրերի կարճաժամկետ ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողներին պետական բյուջեից հաշվարկվել և վճարվել է ընդամենը 94,971.7 հազ. դրամի աշխատավարձ:

2007-2008թթ. պետական բյուջեով «ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գծով պետական պատվեր» ծրագրով ՔԾԽ տարեկան ծախսերի նախահաշվով հատկացված համապատասխանաբար 21,550.0 հազ. դրամ և 21,550.0 հազ. դրամ գումարի դիմաց ֆինանսավորումը կազմել է՝ 19,303.79 և 16,593.06 հազ. դրամ, որի դիմաց էլ երկու տարիներին կատարվել է նույնաչափ դրամարկղային ծախս: 2008 թվականին 2007 թվականի հանդեպ հիշյալ ծրագրով փաստացի ծախսը նվազել է 2,710.73 հազ. դրամի չափով, ինչը պայմանավորված է վերապատրաստված քաղաքացիական ծառայողների թվի նվազմամբ:

Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի յուրաքանչյուր քաղաքացիական ծառայող առնվազն երեք տարին մեկ անգամ ենթակա է պարտադիր վերապատրաստման: Վերապատրաստման գործընթացն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: 2007-2008 թթ. Խորհուրդը վերապատրաստումն իրականացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ այն ձեռք է բերել որպես խորհրդատվական ծառայություններ: Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման համար 2007-2008 թթ. պետական բյուջեից հատկացվել է համապատասխանաբար՝ 19,303.79 հազ. դրամ և 16,593.06 հազ. դրամ: Քաղաքացիական ծառայողների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման, և ընդհանրապես՝ Քաղաքացիական ծառայության համակարգի արդյունավետության բարձրացման շահերից ելնելով, վերապատրաստումը պետք է ձեռք բերվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի պահանջների համաձայն, այն է՝ գնման մրցութային եղանակով: Այս իմաստով հարկավոր է օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ և վերապատրաստումն այլևս չիրականացնել մեկ անձից գնման ձևով՝ հաշվի առնելով նաև բուհական համակարգի մրցունակ լինելը: Արդյունքում, եթե տվյալ գնումը կատարվի գնման մրցութային եղանակով, ապա դրա արդյունավետությունն էլ ավելի կբարձրանա:

Բացի այդ, ՀՀ ՔԾ Խորհրդի 2006 թ. հունիսի 26-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը» հաստատելու մասին թիվ 546-Ն որոշման 20-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստման

արդյունքում տրվում է վկայական: Հարկ է նշել, որ ՀՀ ՔԾ խորհուրդը չունի վկայականների գրանցման, հաշվառման և տրամադրման գրանցամատյանի վարման կարգ, այն կանոնակարգված չէ, ինչպես նաև չի նախատեսում խոտանված վկայականների ոչնչացման կարգ, ինչը կարող է որոշումներ կայացնելիս առաջացնել որոշակի կամայականություններ: Վերը նշվածը թույլ է տալիս եզրակացնել, որ ՀՀ ՔԾ խորհրդի կողմից այս կարևորագույն գործառնության իրականացման նկատմամբ վերահսկողությունն այնքան էլ ուժեղ չէ, հաշվառման գործող համակարգը լիարժեք պատկերացում չի տալիս այդ գործառնության ամբողջական և կատարյալ իրականացման գործընթացի վերաբերյալ:

Համաշխարհային բանկի միջոցների հաշվին ՀՀ պետական հատվածի արդիականացման «Քաղաքացիական ծառայության համակարգի հզորացում» ծրագրի բաղադրիչի շրջանակներում 2006-2009 թթ. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդին տրամադրվել է 78,047.537 հազ. դրամ գումարի չափով սարք-սարքավորումներ, որոնք նախատեսվել են խորհրդի խորհրդակցությունների սենյակի և տպագրատան համար:

Սակայն ստուգման արդյունքներով պարզվել է, որ այդ սարք-սարքավորումները դեռևս չեն օգտագործվում և գտնվում են դրանց պահպանման համար ոչ նպաստավոր պայմաններում: Սարքավորումների մի մասը, հիմնականում՝ տեխնիկական միջոցները, Համաշխարհային բանկը Խորհրդին տրամադրել է 2006 թ. այն դեպքում, երբ և խորհրդակցությունների սենյակի, և տպագրատան վերանորոգման համար անհրաժեշտ միջոցները նույն Համաշխարհային բանկը Խորհրդին հատկացրել է 2009 թ. նոյեմբերին, և ստուգման պահին վերանորոգումը նոր էր սկսվել:

Այսպիսով, կարևորվում է սեղմ ժամկետներում ավարտել վերանորոգման աշխատանքները, այլապես Քաղաքացիական ծառայության խորհրդի տեխնիկական վերազինման համար կատարված 78,047.537 հազ. դրամ գումարի չափով ծախսը կարող է դիտվել անարդյունավետ:

Համաձայն 2002 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կազմակերպությունն անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Նույն հոդվածի 2-րդ մասի ա) կետի համաձայն՝ գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը 2007-2008 թթ. իրականացրել է ակտիվների և պարտավորությունների մասնակի գույքագրում, ինչը կարող է իր

բացասական հետևանքները թողնել համակարգի ֆինանսական հոսքերի կառավարման գործընթացի վրա:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում բացակայում է Օրենքով սահմանված կարգով ներքին աուդիտի համակարգը: Չի պահպանվում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թ. դեկտեմբերի 30-ի «ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, ինչպես նաև վերջիններիս ենթակա հիմնարկներում ներքին աուդիտի անցկացման կարգը» հաստատելու մասին թիվ 934-Ն հրամանի պահանջները: Գլխավոր աուդիտորի պարտականությունները կատարում է քաղաքացիական ծառայության աշխատակազմի ղեկավարի տեղակալը: Սա իր բացասական հետևանքները կարող է ունենալ ֆինանսատնտեսական բնույթի տեղեկատվության արժանահավատության ու ճշտության, ինչպես նաև հաշվապահական հաշվառման գրանցումների մեջ տեղ գտած անհամապատասխանությունների բացահայտման գործընթացի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմում բացակայում է Օրենքով սահմանված կարգով ներքին աուդիտի համակարգը:
2. ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդը 2007-2008 թթ. իրականացրել է ակտիվների և պարտավորությունների մասնակի գույքագրում:
3. Համաշխարհային բանկի միջոցների հաշվին ԶԾ խորհրդին 2006 թվականին տրամադրված 78,047.537 հազ. դրամ գումարի չափով սարք-սարքավորումները դեռևս չեն օգտագործվել :

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմին

1. Մեղմ ժամկետներում միջոցներ ձեռնարկել ներքին աուդիտի համակարգի ներդրման ուղղությամբ:
2. Տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ Օրենքով սահմանված կարգով անցկացնել պարտադիր գույքագրում ակտիվների և պարտավորությունների:
3. Մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատ ներկայացնել «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված տեղեկատվությունը:

ՀՀ կառավարությանը

1. Օրենքով սահմանված կարգով քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման գործընթացն այլևս չդիտարկել որպես խորհրդատվական բնույթի ծառայություններ, և վերջինիս գնումը կազմակերպել «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն՝ մրցութային եղանակով:
2. Մշակել չափորոշիչներ օրենքով լիազորված պաշտոնատար անձի կողմից քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների կայացած մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված անձանց կազմից թափուր պաշտոնի նշանակման նպատակով ընտրություն կատարելու համար: